« 28 » նոյեմբեր 2025թ. No 7346 - Ա

«ԱՌԱՋԻՆ ԲՈՒԺՕԳՆՈՒԹՅՈՒՆ» ԹԵՄԱՅՈՎ ԴԱՍԸՆԹԱՑԻ
2025թ.-ից կրկնողաբար, ք. Երևան («Արաբկիր» ԲՀ-ԵԴԱԻ)
«Բուժքույրերի և թերապիստների գերազանցության կենտրոն» հիմնադրամ,
«Արաբկիր» միացյալ մանկական բարեգործական հիմնադրամ,
Շվեյցարիայի ՍԵՄՌԱ Պլյուս հիմնադրամ

- Թիրախային լսարան՝ ավագ և միջին բուժաշխատողներ
- Մասնակիցների ակնկալվող թվաքանակ՝ յուրաքանչյուր խմբում 15 հոգի
- մասնակիցներին շնորհել ՇՄԶ 6 տեսական և 6 գործնական կրեդիտ.

  դասավանդող Զարա Խուդոյանին՝ ՇՄԶ 6 տեսական և 6 գործնական կրեդիտ
- Կոնտակտ 055052222

Օր 1	
18:00-20:00	**Դասախոսություն** Արտակարգ իրավիճակները, դրանց դասակարգումը, բնութագիրը, կանխարգելման և բնակչության պաշտպանության ուղիները: Կորուստների չափն ու կառուցվածքը: Բժշկական տեսակավորում /triage/, տարհանում
Օր 2	
14:00-16:00	**Դասախոսություն** Արյունահոսություններ: Արյունահոսության դադարեցում, կոտրվածքներ, այրվածքներ, ջրահեղձություն: Փափուկ հյուսվածքների երկարատև ճնշման համախտանիշ /Crush syndrome/: Շոկային իրավիճակների վաղ հայտնաբերում և առաջին բուժօգնություն
Օր 3	
14:00-16:00	**Դասախոսություն** **Բազմափրկարար սիրտ-թոքային վերակենդանացում (ՍԹՎ) իրականացնելիս թիմային աշխատանքի կազմակերպում և արդյունավետ թիմի անդամի դրսևորում:** **Ավտոմատ արտաքին դեֆիբրիլյատորների օգտագործում՝** ավտոմատ արտաքին դեֆիբրիլյատորների կարևորությունը, ճիշտ և վաղ կիրառման կարևորությունը և հմտությունները: **Շնչառություն, շնչուղիների անցանելիություն, օտար մարմնով շնչուղիների խցանման վերացում տարբեր տարիքային խմբերում՝** շնչուղիների անցանելիություն, շնչառություն և արյան շրջանառություն (ABC), օտար մարմնի հեռացում շնչուղիներից, արհեստական շնչառություն, մանեկենի վրա արհեստական շնչառության տեխնիկայի ցուցադրում (բերան-բերան, բերան-քիթ, Ամբու պարկ)
Օր 4	
14:00-15:00	**Գործնական աշխատանք** Ինչպես ճանաչել և ախտորոշել սրտի, արյան շրջանառության սուր կանգը: Տուժածի առաջնային, երկրորդային զննում: Ինչպես հիվանդին (տուժածին)

	տեղավորել կողքի ապահով դիրքում: Ինչպես ստուգել պուլսի, շնչառության և գիտակցության առկայությունը
15:00-17:00	**Գործնական աշխատանք** Մանկական առանձնահատկությունները սիրտ-թոքային վերակենդանացման ժամանակ: Կոմպլեքս սցենարներ
Օր 5	
14:00-15:00	**Գործնական աշխատանք** Վերջույթների անշարժացում (տարբեր շինների օգտագործման տեխնիկաներ): Ողնաշարի և պարանոցի հատվածի անշարժացման տեխնիկա: Տուժածների շտապ դուրսբերումը և տեղափոխումը, դիրքերը, հերթականությունը
15:00-17:00	**Գործնական աշխատանք** Սուպերվայզորի կողմից յուրաքանչյուր մասնակցի գնահատում՝ ըստ տեխնիկական հմտությունների գնահատման ձևաթղթի

Դասավանդող՝ Զարա Խուդոյան: